**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2021թ. թիվ 831-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2022 թվականի հունվարի 31-ը սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն մշակել ու հաստատել համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2022 թվականի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/14/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 13
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. դեկտեմբերի 13-ի
թիվ 831-Ա որոշման

# Պ Լ Ա Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշում-ներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **Ի ԱՌԻՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | | |
| **1.1 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 1.1.1 | Մասնակցություն «Ուժեղ երկրաշարժի դեպքում Ալավերդի խոշորացված համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով | Մարտ | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Լոռու ՄՓՎ, Ալավերդու համայնքապետարան, Ալավերդի համայնքի արձագանքող ստորաբաժանումներ | |
| 1.1.2 | Մասնակցություն «Ուժեղ երկրաշարժի դեպքում Թումանյան խոշորացված համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով | Նոյեմբեր | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Թումանյանի համայնքապետարան, Թումանյան համայնքի արձագանքող ստորաբաժանումներ | |
| **1.2 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 1.2.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Լոռու մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՏՈՒ-ին | Հունիս, Դեկտեմբեր | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| **2. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 2.1 | Մասնակցություն պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար-պարապմունքների անցկացմանը | Յուրաքանչյուր կիսամյակ | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Մասնակցություն ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների փրկարարական ծառայողների հետ կրակային պատրաստության պարապմունքների կազմակերպմանը և անցկացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 2.3 | Մասնակցություն Լոռու մարզային ճառագայթային, քիմիական, կենսաբանական միջադեպերին արձագանք-ման թիմերի մասնագետների վերապատրաստում՝ դասընթացների կազմակերպմանը: | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 2.4 | Մասնակցություն Լոռու ՄՓՎ-ում մեթոդական աջակցությանը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման, ինչպես նաև ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ուղղությամբ: | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 2.5 | Մասնակցություն ԱԻՆ ՓԾ Լոռու ՄՓՎ ՃԿԿ անձնակազմի հետ ճգնաժամային կառավարման, ահազանգերի սպասարկման, երկրատեղեկատվական համակարգերի, հոգեդիագնոստիկայի և վերապատրաստման վերաբերյալ դասընթացների անցկացմանը: | Մայիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **3.Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 3.1 | Մասնակցություն ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների միջև մարզական միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը հետևյալ մարզաձևերից՝ | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | ԱԻՆ ՓԾ շախմատի առաջնություն | Հունիս | | | | |
| | ԱԻՆ ՓԾ սեղանի թենիսի առաջնություն | Սեպտեմբեր | | | | |
| 3.2 | Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը, հատկապես համայնքներում, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի համայնքներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.3 | Մասնակցություն Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի միջոցով ՓԾ փրկարարական ծառայողների ՌԴ ԱԻՆ բարձրագույն ուսումնական հաստատություններում և ՀՀ-ում վերապատրաստման ուղղությամբ աշխատանքների կատարմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 3.4 | Մասնակցություն արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 348-Լ և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 23-ի թիվ 104-Լ «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի համատեղ հրամանի պահանջների կատարմանը | 31.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 3.5 | Մասնակցություն ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի «Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային պաշտպանություն (CBRN)» ծրագրի հետ աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | 1) ՔԿՃՄ հետախուզական/զանգվածային խոցվածների ախտահանման նոր սարքավորումների վերաբերյալ դասընթաց | Փետրվար-Մարտ | | | | |
| | 2) ՔԿՃՄ ՋՈՋ գործողություններ | Մայիս | | | | |
| | 3) ՔԿՃՄ ՋՈՋ տեխնիկական անձնակազմի համար դասընթաց | Հունիս- Հուլիս | | | | |
| | 4) ՔԿՃՄ ՋՈՋ մարտավարության, տեխնիկայի և ընթացակարգերի վերաբերյալ դասընթաց | Սեպտեմբեր | | | | |
| | 5) Իրական գործոնների կիրառմամբ դասընթաց | Հոկտեմբեր | | | | |
| **4. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 4.1 | Մասնակցություն ԱԻՆ համակարգի աշխատակիցների հատուկ հաշվառման և ամրագրման աշխատանքների անցկացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 4.2 | Մասնակցություն զորահավաքային նախապատրաստու-թյան հարցերով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերման աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 4.3 | Մասնակցություն Լոռու մարզում և համայնքներում ՔՊ վիճակի համալիր գնահատման գործընթացի կազմակերպմանը և իրականացմանը | Ապրիլ | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **5. INSARAG թիմերի պատրաստականության աստիճանի ապահովում** | | | | | | |
| 5.1 | Մասնակցություն ԱԻՆ ՃԿՊԱ-ում ՓԾ փրկարարական ծառայողների համար վերապատրաստման և INSARAG-ի միջազգային չափորոշիչներին համապատասխան որակավորման դասընթացների կազմակերպմանը և հսկողության իրականացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **6. Թիկունքի և նյութատեխնիկական ապահովման միջոցառումներ** | | | | | | |
| 6.1 | Մասնակցություն Լոռու ՄՓՎ ստորաբաժանումներում շահագործվող հատուկ, հրշեջ, փրկարարական տեխնիկայի, տեխնիկական զինվածության, փրկարարական սարքերի, ագրեգատների և սարքավորումների փողրակային տնտեսության ուժային փորձարկումների կազմակերպմանը և վերահսկմանը | 03.05-04.11 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **7.Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 7.1 | Մասնակցություն ԱԻՆ ՓԾ 2023թ. հիմնական միջոցառումների պլանի մշակմանը | Մինչև 15.11 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 7.2 | Մասնակցություն ԱԻՆ ՓԾ 2023թ. աշխատանքային պլանի մշակմանը | Մինչև 02.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **8. Բժշկական ապահովման և հոգեբանական աջակցության ուղղությամբ** | | | | | | |
| 8.1 | Մասնակցություն ՓԾ փրկարար ծառայողների, նրանց ընտանիքի անդամների, փրկարար ծառայության կենսաթոշակառուների ամբուլատոր բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.2 | Մասնակցություն ՓԾ փրկարար ծառայողների պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.3 | Մասնակցություն փրկարար ծառայողների ամենամյա դիսպանսերիզացիայի կազմակերպմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.4 | Մասնակցություն հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական հետազոտության իրականացմանը Լոռու մարզային փրկարարական վարչության անձնակազմի հետ | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **9. Իրավական, օրենսդրական բազայի կատարելագործման ուղղությամբ** | | | | | | |
| 9.1 | Մասնակցություն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 06.05.2019թ. «ԱԻՆ ՓԾ մարզային (Երևան քաղաքի) ՓՎ-ներում համալիր ստուգման և մեթոդական, մասնագիտական օգնության ցուցաբերման հարցաշարը հաստատելու և ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. մարտի 21-ի N 17/340 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 17/507 հրամանում փոփոխությունների կատարմանը | Հունիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **10. Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | | |
| **10.1 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 10.1.1 | «Մեծավանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմա-կերպումը և իրականացումը» թեմայով | 14.10 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու մարզպետարան, ԱԻ մշտական գործող հանձնաժողով, տարահանման հանձ-նաժողով, մարզի ճառագայթային, քիմիա-կան և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկներ, Տաշիր, Մեծավան համայնք-ներ, ԱԱԾ 1-ին սահմանապահ ջոկատ (ներկայացուցիչ), կազմակերպությունների և համայնքների մասնա-գիտացված խմբեր և արձագանքող ուժեր | |
| **10.2 ՄՓՎ փրկարար ծառայողների հետ անցկացվող շտաբային ուսումնավարժություններ** | | | | | | |
| 10.2.1 | Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 30.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու մարզային փրկարարական վարչության կառուցվածքային | |
| 10.2.2 | «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ | 26.08 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | | | | բաժիններ և ենթակա հրշեջ-փրկարարական ջոկատներ | |
| **10.3 Համայնքների կողմից անցկացվող շտաբային ուսումնավարժություններ** | | | | | | |
| | Մարզի 10 խոշորացված համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ, համայնքի ղեկավար | Համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 10.3.1 | «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 01.08 | ՄՓՎ պետ, Թումանյան համայնքի ղեկավար | Համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, ՄՓՎ անձնակազմ | |
| | | 02.08 | ՄՓՎ պետ, Ախթալա համայնքի ղեկավար | | | |
| | | 03.08 | ՄՓՎ պետ, Ալավերդի համայնքի ղեկավար | | | |
| | | 04.08 | ՄՓՎ պետ, Փամբակ համայնքի ղեկավար | | | |
| | | 05.08 | ՄՓՎ պետ, Լերմոնտովո համայնքի ղեկավար | | | |
| | | 08.08 | ՄՓՎ պետ, Ֆիոլետովո համայնքի ղեկավար | | | |
| | | 09.08 | ՄՓՎ պետ, Ստեփանավան համայնքի | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ղեկավար | | | |
| | | 10.08 | ՄՓՎ պետ, Գյուլագարակ համայնքի ղեկավար | | | |
| | | 11.08 | ՄՓՎ պետ, Տաշիր համայն-քի ղեկավար | | | |
| | | 12.08 | ՄՓՎ պետ, Մեծավան համայնքի ղեկավար | | | |
| **10.4 Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 10.4.1 | Լոռու մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում | 29.07 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ, համապատասխան կազմակերպություններ | |
| **10.5 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 10.5.1 | Մարզի թվով 5 կազմակերպությունների կողմից հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ, կազմակերպու-թյան տնօրեն | Կազմակեր-պության ղեկավար կազմ | Կազմակերպության կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | 1) «Ավտոճանապարհին առաջացած մերկասառույցի հետևանքների վերացման միջոցառումներ» թեմայով | 16.02 | ՄՓՎ պետ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն | «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի ղեկավար կազմ | «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | 2) «Ավտոճանապարհին առաջացած քարաթափման հետևանքների վերացում» թեմայով | 18.10 | ՄՓՎ պետ, «Սպիտակի Ճանապարհ» ՓԲԸ տնօրեն | «Սպիտակի Ճանապարհ» ՓԲԸ-ի ղեկավար կազմ | «Սպիտակի Ճանապարհ» ՓԲԸ-ի կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | 3) «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով | 18.11 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի ղեկավար | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի վթարավերականգնո-ղական խումբ, ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տնօրեն | կազմ | | |
| | 4) «Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով | 21.11 | ՄՓՎ պետ, «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն | «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնա-ճյուղի ղեկավար կազմ | «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի արձագանքող ուժեր, ՄՓՎ անձնակազմ | |
| | 5) «Վանաձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի խոշոր վթարի դեպքում բնակչությանը ջրով ապահովման կազմակերպում» թեմայով | 22.11 | ՄՓՎ պետ, «Վեոլիա ջուր» ՓԲԸ Վանաձորի տեղամասի ղեկավար | «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի Վանաձորի տեղամասի ղեկավար կազմ | «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի Վանաձորի տեղամասի արձագանքող ուժեր, ՄՓՎ անձնակազմ | |
| 10.5.2 | ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ մարզի հանրա-կրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 01-04.03 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| 10.5.3 | ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատու-թյուններում, հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 01-06.09 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| 10.5.4 | Երկրաշարժի զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ «Աղետներին դիմակայունության օր» խորագրով անցկաց-վող միջոցառումների կազմակերպում և համակարգում | 07-12.12 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| **10.6 Օբյեկտային վարժանք** | | | | | | |
| 10.6.1 | Մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում գործող 2 կազմակերպու-թյուններում օբյեկտային վարժանքի անցկացմանը | 27.10<br>28.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **10.7 Գործնական պարապմունքներ** | | | | | | |
| 10.7.1 | Լոռու մարզի համայնքներում ՔՊ թեմաներով գործնական պարապմունքների իրականացում՝ էլեկտրական շչակների գործարկմամբ | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՏԻՄ ղեկավար կազմ, ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **11. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 11.1 | ՀՀ Լոռու մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապ-մունքների անցկացման վերաբերյալ զեկույցի ներկայացում | 05.04<br>04.07<br>05.10<br>26.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **12. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | | |
| 12.1 | ՀՀ Լոռու մարզի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը գետերի ջրերի վարարումների և սելավների ռիսկերից պաշտպանելու նպատակով առաջարկությունների ներկայացում | Մինչև 01.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 12.2 | ՀՀ Լոռու մարզի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի վերաբերյալ տվյալների հավաքագրում, վերլուծում և «Հիդրոօդերևու-թաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կանխատեսում-ների հիման վրա հրատապ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մարտ-հունիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 12.3 | ՀՀ կառավարության 10.11.2011թ. N 1582-Ն որոշման համաձայն՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին տվյալների ամփոփում, վերլուծում և տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչ-յուր ամսվա 28-ը՝ նախորդ ամսվա համար | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 12.4 | ՀՀ Լոռու մարզի տարածքում քիմիապես վտանգավոր օբյեկտների, ինչպես նաև քիմիական թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 12.5 | ՀՀ տարածքում գտնվող քիմիապես վտանգավոր օբյեկտների և հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության վկայագրերի փորձաքննության և ՀՀ տարածքում առկա պոչամբարների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում | 24.06<br>27.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 12.6 | Լոռու մարզում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **13. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 13.1 | ՀՀ Լոռու մարզի ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում | 25.06<br>23.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, Համապատասխան համայնքներ և կազմակերպություններ | |
| 13.2 | Ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, Պաշտպանության նախարարությանը չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզային տարածքային ստորաբաժանում | |
| 13.3 | Ապաստարանների պահպանության վիճակի ուսումնասիրություն և տվյալների ներկայացում Վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1333-ԱԳ որոշմամբ ստեղծված հանձնաժողովին | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ | |
| 13.4 | Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների տարահանման հանձնաժողովների հետ համատեղ տարահանման ուղիների ճշգրտում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, Տարահանման հանձնաժողով | |
| 13.5 | ՓԾ տնօրենի 30.04.2021թ. N Ն/11.6.5/21137-2021 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Լոռու մարզի բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեղեկանքի ներկայացում | Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ | |
| **14. INSARAG թիմերի պատրաստականության աստիճանի ապահովում** | | | | | | |
| 14.1 | INSARAG-ի ներքին որակավորում անցած քաղաքային որոնողափրկարարական թիմերի (ՔՈՓ) դաշտային վարժանքների կազմակերպում և անցկացում | Սեպտեմբեր | ՄՓՎ պետ | Լոռու ՔՈՓ թիմ | Լոռու ՄՓՎ անձնակազմ | |
| | Լոռու մարզի ՔՈՓ թիմ (32-ժամյա) | | | | | |
| **15. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 15.1 | ԱԻՆ ՓԾ Լոռու ՄՓՎ ծառայողների և ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության ոլորտի մասնագետների հետ ՀՀ Լոռու մարզի կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ- | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ, պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման բազայի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում | | | | կազմակերպություններ | |
| | 1. ՀՀ Լոռու մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև առաջնության կազմակերպում, անցկացում և մասնակցություն հանրապետական առաջնությանը | Տարվա ընթացքում | | | | |
| | 1) մարզային | մարտ | | | | |
| | 2) հանրապետական | Ապրիլ | | | | |
| | 2. պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման և ուսուցման կազմակերպման վերաբերյալ զեկույցի ներկայացում | 09.07<br>10.12 | | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 15.2 | Լոռու ՄՓՎ ստորաբաժանումների կողմից հրդեհաշիջման օպերատիվ պլանների և հրդեհաշիջման քարտերի մշակման գործընթացի համակարգում | Մինչև 14.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 15.3 | ՀՀ Լոռու մարզի տարածքում գործող փրկարարական ուժերի գույք-սարքավորումների, տեխզինվածության և անձնակազմի հաշվառման և համակարգման վերաբերյալ զեկույցի ներկայացում | Մինչև 08.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 15.4 | Լոռու ՄՓՎ ստորաբաժանումների կողմից ներկայացվող հրշեջ հիդրանտների տեղադրման և ջրավազանների կառուցման ուղղությամբ իրականացված աշխատանքների համակարգում | 07.04<br>07.07<br>07.10<br>23.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | Մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Համապատասխան կազմակերպություններ, | |
| | Խոհանոցում առաջացած հրդեհի հրդեհաշիջման աշխատանքներ և տարահանում | 24.03 | ՄՓՎ պետ | №36 ՀՓՋ | ք.Վանաձոր, Հույսի տուն ծերերի հանգստավայր ԲՀԿ, Աբեղյան 21 | |
| | Տարահանում և պահեստում առաջացած հրդեհի հրդեհաշիջման աշխատանքներ | 20.05 | | | ք.Վանաձոր, «Գլորիա» ՍՊԸ կարի ֆաբրիկա, Երևանյան խճուղի 113/1 | |
| | Հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացում | 17.08 | | | ք.Վանաձոր, Ծիծեռնակ ճամբար | |
| | Արխիվում առաջացած հրդեհի հրդեհաշիջման | 21.10 | | | ք.Վանաձոր, | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանքներ և տարահանում | | | | «Կերպարվեստի թանգարան», Տիգրան Մեծ պողոտա թիվ 52 | |
| | Օդային տագնապ ազդանշանի դեպքում աշխատակիցների և ուսանողների պատսպարման կազմակերպումը և իրականացումը | 16.03 | ՄՓՎ պետ | №37 ՀՓՋ | Վանաձորի պետական համալսարան, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 38 | |
| | Խոհանոցում առաջացած հրդեհ: Աշխատակիցների և երեխաների անվտանգության ապահովում: Տարհանում, ԱՕ և հրդեհաշիջում | 24.05 | | | Վանաձորի թիվ 35 «ՆՈՒՀ», ք.Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ 3 | |
| | Երկրաշարժ, մասնակի փլուզում, նրա հետևանքով առաջացած հրդեհ և փլատակներում հայտնված տուժածի դուրս բերում | 17.08 | | | Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան, Կ.Դեմիրճյան 23/1 | |
| | Երկրաշարժ, մասնակի փլուզում, նրա հետևանքով առաջացած հրդեհի հրդեհաշիջում և փլատակներում հայտնված տուժածների առաջին օգնության ցուցաբերում և դուրս բերում | 13.10 | | | Վանաձորի N 16 հիմնական դպրոց, ք. Վանաձոր, Տարոն 4 թաղ. | |
| | Գազի արտահոսքից առաջացած հրդեհի հրդեհաշիջում | 04.03 | ՄՓՎ պետ | №38 ՀՓՋ | Փամբակի ԱԳԼՃԿ «Սարի գազ» ՍՊԸ , Ալավերդու խճուղի 1 | |
| | Օդային տագնապ ազդանշանի դեպքում աշխատակիցների և ուսանողների պատսպարման կազմակերպումը և իրականացումը | 07.06 | | | «ՔՈԱՖ» կենտրոն, գ.Դեբեդ, 1-ին փող. 31շ. | |
| | Երկրաշարժ, մասնակի փլուզում, նրա հետևանքով առաջացած հրդեհ և փլատակներում հայտնված տուժածի դուրս բերում | 09.09 | | | գ.Գուգարքի 6-րդ փող.38շ., Հ.Շիրազի անվ. ավագ դպրոց | |
| | Հրդեհաշիջման կազմակերպում տանիքում ծագած հրդեհի դեպքում | 11.11 | | | գ.Եղեգնուտ 1-ին փող. 7շ., միջնակարգ դպրոց | |
| | «Արհեստանոցում առաջացած հրդեհի հրդեհաշիջում» թեմայով | 24.03 | ՄՓՎ պետ | №39 ՀՓՋ | Ք. Ալավերդի, Մարտի 8-ի փ., Ալավերդու արհեստագործական ուսումնարան | |
| | «Միջանցքում առաջացած հրդեհի հրդեհաշիջում, առաջին օգնության ցուցաբերում» թեմայով | 12.05 | | | Գ.Ճոճկան,6/41, միջնակարգ դպրոց | |
| | «Քիմիայի լաբորատորիայում առաջացած պայթյունի | 26.09 | | | Ալավերդու թիվ 12 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հետևանքով տուժածների դուրս բերում և առաջին օգնության ցուցաբերում» թեմայով | | | | հիմնական դպրոց, Ս.Սարահարթ 2/26ա | |
| | «Ճաշարանում էլեկտրական մալուխների կարճ միացումից առաջացած հրդեհ: Ծխապատ գոտուց մարդկանց տարահանում» թեմայով | 12.12 | | | Ալավերդու թիվ 7 միջնակարգ դպրոց, Սանահին կայարան թաղամաս | |
| | Խոհանոցում էլ. մալուխների կարճ միացումից առաջացած հրդեհ: Ծխապատ գոտուց մարդկանց տարահանում | 16.03 | ՄՓՎ պետ | №40 ՀՓՋ | Բովաձորի հիմնական դպրոց | |
| | Հրդեհաշիջման կազմակերպում տանիքում ծագած հրդեհի դեպքում | 12.05 | | | Ագարակի միջնակարգ դպրոց | |
| | Հրդեհաշիջման և տարահանման կազմակերպում | 14.09 | | | Ամրակիցի հիմնական դպրոց | |
| | Սպորտդահլիճում հրդեհաշիջման և տարահանման կազմակերպում | 10.11 | | | Լեջանի միջնակարգ դպրոց | |
| | «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում աշխատակիցների և աշակերտների պատսպարման կազմակերպումը և իրականացումը | 24.03 | ՄՓՎ պետ | №41 ՀՓՋ | Արևաշողի միջնակարգ դպրոց | |
| | Երկրաշարժ, մասնակի փլուզում, նրա հետևանքով առաջացած հրդեհ և փլատակներում հայտնված տուժածի դուրս բերում | 20.05 | | | Ջրաշենի միջնակարգ դպրոց | |
| | Երկրաշարժ, մասնակի փլուզում, նրա հետևանքով առաջացած հրդեհի հրդեհաշիջում և փլատակներում հայտնված տուժածների առաջին օգնության ցուցաբերում և դուրս բերում | 25.08 | | | Քարաձորի հիմնական դպրոց | |
| | Խոհանոցում առաջացած հրդեհ: Աշխատակիցների և երեխաների անվտանգության ապահովում: Տարհանում, ԱՕ և հրդեհաշիջում | 13.10 | | | Սպիտակի թիվ 1 միջնակարգ դպրոց, Մյասնիկյան փող. | |
| | Հրդեհաշիջում, տարահանում և 1-ին օգնության ցուցաբերում | 24.03 | ՄՓՎ պետ | №42 ՀՓՋ | Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոց Ք.Տաշիր, Կ.Դեմիրճյան 8 | |
| | ԱԻ ժամանակ տարահանում և 1-ին օգնության ցուցաբերում | 17.06 | | | Տաշիրի մալուխի գործարան, ք.Տաշիր,Գ.Ջահուկյան 10 | |
| | Հրդեհաշիջում, տարահանում և 1-ին օգնության ցուցաբերում | 22.09 | | | Մեծավան համայնքի գյուղապետարան | |
| | ԱԻ ժամանակ տարահանում և 1-ին օգնության | | | | «Վահագն և Ինգա | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ցուցաբերում | 08.12 | | | Գրիգորյաններ» ՍՊԸ<br>Ք. Տաշիր, Երևանյան 14 | |
| **16. Կառավարման, կապի և ազդարարման համակարգերի ու համակարգչային ծրագրերի ներդրման և կատարելագործման ուղղությամբ** | | | | | | |
| 16.1 | Լոռու մարզային փրկարարական վարչության կապի համակարգերի վիճակի ուսումնասիրություն, վերլուծում և տեղեկատվության ներկայացում | 10.06<br>09.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 16.2 | Լոռու մարզային փրկարարական վարչության ազդարարման համակարգերի վիճակի ուսումնասիրություն, վերլուծում և տեղեկատվության ներկայացում | 10.06<br>09.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 16.3 | Լոռու մարզային փրկարարական վարչությունում ռադիոկապի որակի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **17. Կադրերի ընտրության, տեղաբաշխման և ուսուցման ուղղությամբ** | | | | | | |
| 17.1 | Փրկարարական ծառայողների մասնագիտական պատրաստության պարապմունքների կազմակերպում և անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **18. Ծառայության կազմակերպման ուղղությամբ** | | | | | | |
| 18.1 | Լոռու ՄՓՎ անձնակազմի հաճախելիության, նրանց կողմից աշխատանքային կարգապահության պահպանման նպատակով պլանային և անակնկալ ստուգումների իրականացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 18.2 | Լոռու ՄՓՎ կողմից ծառայողական և աշխատանքային գործունեության ընթացքում օրինականության, աշխատանքային և ծառայողական կարգապահության պահպանման նկատմամբ հսկողության իրականացում, նրանց կողմից թույլ տրված ծառայողական իրավախախտումների կանխարգելման և բացահայտման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **19. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 19.1 | ԱԻՆ ՓԾ Լոռու ՄՓՎ 2021թ. հիմնական աշխատանքների կատարման մասին հաշվետվության մշակում | Մինչև 22.01 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 19.2 | Արտասահմանյան պետությունների կամ միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների կողմից իրականացվող տարբեր ծրագրերի՝ դրամաշնորհային, վարկային և այլ (գործունեությանը), այդ թվում՝ որպես | 05.04<br>04.07<br>05.10<br>20.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փորձագետ, մասնակցության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | | | | | |
| 19.3 | ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. հոկտեմբերի 14-ի N Ն/01.4/47187-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով աշխատակիցների վերաբերյալ տվյալների ներկայացում | 05.01<br>05.04<br>06.07<br>05.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 19.4 | ՓԾ տնօրենի 06.11.2018թ. N 17/17.1/13400-18 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ անվտանգության սպառնալիքների և դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 19.5 | ՓԾ տնօրենի 18.09.2020թ. N Ն/11.4.3/42371-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով իրականացված գործուղումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Մինչև յուրաքանչյուր ամսվա 05-ը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 19.6 | ՓԾ տնօրենի 19.08.2020թ. Ն/11.1.3/37000-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզում առկա հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | 05.01<br>04.07 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 19.7 | ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակ-չության պաշտպանության և քաղաքացիական պաշտ-պանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի մշակում | Մինչև 23.11 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| 19.8 | ՓԾ տնօրենի 17.08.2020թ. Ն/11.1.3/36581-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ-ում առկա աղբավայրերում հակահրդեհային միջոցա-ռումների իրականացում և տեղեկատվության ներկայացում | Մինչև 10.01, մինչև 11.07 | | | | |
| 19.9 | «Մարզի քաղաքացիական պաշտպանության պլան»-ի ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| 19.10 | «Մարզի բնակչության տարահանման պլան»-ի ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| 19.11 | «Մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ի ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| 19.12 | ՓԾ տնօրենի 05.02.2021թ. Ն/11.3.1/5502-2021 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման | Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կենտրոնի կողմից ՓԾ ստորաբաժանումներին տրամադրված ավտոմեքենաների ելքերի վերաբերյալ տվյալների ներկայացում | աշխատանքային օրը | | | | |
| **20. Զորահավաքային պատրաստություն** | | | | | | |
| 20.1 | Զորահավաքային պատրաստության միջոցառումներ | Առանձին պլան-ժամանակացույցով | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան զինկոմիսարիատներ | |

Հապավումներ՝

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ԱԻՆ՝ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՊՆ՝ պաշտպանության նախարարություն
ՓԾ՝ փրկարար ծառայություն
ՄՓՎ՝ մարզային փրկարարական վարչություն
ՃԿԿ՝ ճգնաժամային կառավարման կենտրոն
ՀՓՋ՝ հրշեջ-փրկարարական ջոկատ
ՃԿՊԱ՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
ԲՊԱՌՆ՝ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման
ԱԻ՝ արտակարգ իրավիճակներ
ՔՊ՝ քաղաքացիական պաշտպանություն
ԱՌՆ՝ աղետների ռիսկի նվազեցում
ՃՈ՝ ճանապարհային ոստիկանություն
ՀՇՈՒ՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն
ՇՈՒ՝ շտաբային ուսումնավարժություն
ԲՊ՝ բնակչության պաշտպանություն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

13/12/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ԱՇՐԱՖՅԱՆ